

Խակ Թուչնոց տարեկան միջին թիւն է

40,000	էն	70,000	զոյգ աքլոր	13,750	ուռալի,	դահեկան	275,000
10,000	սագ	և բագ	վայրի	1,400	և .	»	28,000
1,200	կարաս			1,200	և .	»	24,000

Խակ ծովային կենդանիները, ինչպէս փոկը՝ հրացանով կ'որսան. խարխալու նեցող փղըր նաւեր կը գործածեն ծովու հորթը որսալու, զոր զարնելու համար՝ փքին մ'ուռնին, որուն մէկ ծայրէն 240 ոտք երկայնութեամբ կաշիէ չուան կ'անցընեն պզտի տակառի մը հաստատած. ասկէ զատ տակառին հաստատուած է 300 ոտք երկայնութեամբ պարան մ'ալ:

Ծովու հորթը կը գտնան ծովեզերքը կամ սառույցներու վրայ քնացած, բայց կը ջանան արթնցնել. որովհետեւ քնացած ատեն կաշին կ'ամփոփուի և անանկ խիտ ծալքեր կը ձևացընէ, որ փքինը չիկրնար ծակել:

Կենդանին վիրաւորուիլը զգալուն

պէս ջուրը կը նետուի, որսորդները կ'աճապարեն ջուրը նետելու կաշիէ չուանը և տակառը. յետոյ տակառին կապուած պարանին ծայրը բռնելով կը ցատքեն ծովեզերքը կամ սառուցին վրայ, ուր հաստատուն ցից մը տնկելով պարանին ծայրը անոր կը կապեն: Քանի մը վայրկեան լողալէն ետքը՝ կենդանին կը տկարանայ. ան ատեն ծովեզերք կը քաշեն զայն. մորթը երկու կը կտրեն, և գրեթէ երեք շաբաթի չափ կը թաղեն, որպէս զի կակղնայ, և յետոյ ճարպը տալ կառներու մէջ կը դիզեն: Ծովային կենդանեաց որսորդը 240 հոգի են. 200էն ինչուան 500 ծովու հորթ կը սպաննեն, 400 թառափ մեծ (ստուրիոն) և ուրիշ ծովային կենդանիներ:

ՀԵՏԱՌՐՐԱԿԱՆՔ

Առանց դիտարկել Արուսեակի մոլորակը փետեւ: — Այս պայծառ մոլորակ աստեղ վրայ հետաքրքրական տեղեկութի մը տուած է նորերս աստեղագէտ մը, և կը հաստատէ որ պարզ աչքով ալ Արուսեակին շրջանակը գիտե՞լ կարելի բան է, մանաւանդ թէ գիւրին է. զարմանք է, կ'ըսէ, թէ ինչպէս այս գեղեցիկ մոլորակը որ բնականապէս առ ինչն կը քաշէ հետաքրքրաց աչքը, այսչափ դարերէ ի վեր առանց զննութեան թողուած ըլլայ՝ ինչուան որ գիտականները հնարուեցան, կամ թէ ինչպէս Կոպեռնիկոս այս աստղիս երևոյթները չգիտեց, զորս կը հաստատէր, և գրեթէ կը մարգարէանար, և որոնք իր աստեղաբաշխական գրութեանցը ա՛մուր նեցուկ մը պիտի ըլլային: Ինչ և իցէ, ամեն զննողք, միայն թէ քիչ մը հմտութիւն ունենան, կրնան այսուհետև ստուգել այն երևոյթը մինչդեռ Արուսեակը իր շրջանին այն կէտին մէջն ըլլայ որ գեղեցիկ կերպով կ'երևի. բայց գիտելու համար պէտք է գիշերուան սպասել. վերջապէս անոր աղօթացած ժամանակը յարմարագոյնն է, երբ Արուսեակը գեղեցիկ աստղ մը կ'երևի, գեռ իր բոլոր կրակներովը չփայլած. այն ատեն եթէ պայծառ մթնոլորտ մ'ըլլայ՝ սովորական սուր աչք մ'ալ աղէկ գիտելով կրնայ մոլորակին բարակ մահիկն ալ տեսնել. բաւական է թէ գիտնայ մէկը թէ ո՞ր եղանակին արեւուն լոյսը կ'առնու Արուսեակը և որչափ:

Կառն իմ քարթիւն (Pétrole). — Շուետի և Օգմոնտի լեռներուն վրայ նաւթի աղբերաց համար արգեսեան ջրհորոց նման փորուածք կ'ընեն. անոնցմէ մէկը մինչև 253 ոտք փորեր են: Ելած նիւթերը այն տեսակ իւզով տոգորեալ են զոր Ամերիկացիք կ'անուանեն Մալեր-Լիթի ել, և որ սովորաբար Եւրոպայի մէջ գործածուածէն աւելի սև է: Անոր համար որոշած են մինչև 600 ոտք խոր փորել, ու կը յուսան բուն քարձիւթը գտնել և շատ ալ առատութեամբ:

Վառնգալէիոյ ընթացիկ. — Լոնտոնայի ծովային վաճառականութեան միջերանոցներուն մէկուն մէջ մեծ հրդեհի մը պատահելով, հնարեցին ամեն միջերանոցաց մէջ ուր գիւրաւառ վաճառք կան, նոր տեսակ ջերմաչափ մը հաստատել. որուն սնդկի սիւնը երբոր որոշեալ աստիճանի մը հասնի՝ կ'ազգէ ելեքտրական թելի մը վրայ՝ որ հաղորդուած է գործիքի մը հետ. ասալ մէկէն զանգակ մը կը հնչեցընէ ջրհանաւորաց կեցած տեղը. այնպէս որ երբ այսպիսի կրակ հանգիստի՝ մէկէն ջերմաչափը կը բարձրանայ, և վտանգը կ'իմացընէ: